

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Մուրացանի կենսափիլիսոփայությունը

ժամանակի փորձությանը դիմացած հայտնի կարգախոսներից մեկը՝ պատմությունը, եթե չի ծառայում ներկային, ապա, արժեզրկվում է, լիովին վերաբերում նաև պատմավեպերին, ավելի ճիշտ՝ բոլոր այն ստեղծագործություններին, որոնց մեջ պատմությունը գեղարվեստական մարմնավորում է ստացել: Այն, որ ի թիվս անցյալի հայ դասականների, Մուրացանը շարունակում է մնալ ինչպես ժամանակակից հայ ընթերցողների, այնպես էլ գրականագետների ուշադրության կենտրոնում, վկայում է այն փաստը, որ նրա ստեղծագործությունները, մասնավորապես «Գևորգ Մարգպետունի» պատմավեպն ու «Ռուզան» դրաման ճշգրիտ պատասխաններ են պարունակում արդիականության պարտադրած հարցադրումներին:

Արցախի հայ գրականությանը պարզևած կարևոր անուններից է Մուրացանը, որն իր ուրույն և անշփոթելի տեղն ունի հայ բանարվեստի պատմության մեջ և շարունակում է թե՛ պահել հետաքրքրությունն իր նկատմամբ, ոչ միայն վերջը նշածս հատկանիշի շնորհիվ, այլև այն պրոֆեսիոնալ բարձր հմտության /ինչով, ցավոք սրտի, այնքան էլ հարուստ չէ մեր թե՛ անցյալ և թե՛ ներկա գրական ընթացք/, որն օգնել է հեղինակին գրեթե անթրի կառուցել իր ստեղծագործությունները, ինչն իր հերթին տեղ չի թողել խճողումների և ավելորդաբանությունների համար, ասել է, թե առավել հստակվել է ասելիքը և գրողի արձակած նետը շի շեղվել թիրախից: Թերևս այս կարևոր հանգամանքներով է պայմանավորված, որ հայ գրականագիտությունը միշտ իր ուշադրության կենտրոնում է պահել այս գրողին: Եվ բնականաբար, Արցախն էլ միշտ հպարտացել է իր գրողով, և Արցախ աշխարհում ծնված գրականագետն էլ դժվար թե անտարբեր մնար այս գրողի հանդեպ: Այնպես որ, պատահական չէր, որ նույն աշխարհում ծնված գրականագետ Ս. Սարինյանի լավագույն աշխատություններից մեկը նվիրված է այս հեղինակին: Նրա «Մուրացան» աշխատությունը նոր խոսք էր մուրացանագիտության մեջ: Մուրացանին հողվածներով անդրադարձել է նաև արցախցի բանաստեղծ, գրականագետ Վարդան Հակոբյանը: Նրանք երկուսն էլ Մուրացանի մասին խոսելիս կարևոր ելակետ են ընտրել նրա կենսափիլիսոփայությունը, որը գրողի ստեղծագործությունը քննելու կարևոր նախապայման է: Գրողի

կենսափիլիսոփայությունը ամբողջանում է նրա կենսափորձի և ուսումնառության շրջանակների (մետատեքստ) համադրմամբ: Ս.Սարինյանը, համարելով, որ իր նախորդները բավականին հանգամանակից են ներկայացրել Մուրացանի կյանքը, միջավայրը և դրանցով պայմանավորված աշխարհայացքային կողմերն ու ստեղծագործական խառնվածքը, շատ համառոտ է անդրադառնում անհատական խառնվածքին և միջավայրին և հիմնական շեշտը դնում է ուսումնառության շրջանակների վրա: Նա կատարում է գրողի մետատեքստի քննություն՝ փորձելով մեկնել նրա՝ ուսումնառության շրջանակներով պայմանավորված հայացքները: Իհարկե գրողի ապրած ժամանակը և իրականությունը, գրողի կենսափորձն են աշխարհայացքի առաջին ձևավորողները: Ժամանակի պրոբլեմներն ու մտահոգություններն են առաջին հերթին ծնել նրա հերոսներին: Սակայն դրանց ավելի խորքային դրսևորումներին և ընդհանրացումների հասնելուն մեծապես նպաստում են ուսումնառության շրջանակները: Սարինյանը նշում է, որ Մուրացանը ծանոթ է եղել ժամանակի փիլիսոփայական համակարգերին և Շոպենհաուերի, Սպենսերի, Կանտի և էլի մի շարք փիլիսոփաների ուսմունքներից է համադրվում Մուրացանի մետատեքստը: Մուրացանի աշխարհայացքում մեծ տեղ է զբաղեցնում պեսիմիզմը: Պեսիմիզմը ժխտում է զարգացումն ու առաջընթացը: Մուրացանը հարում էր պահպանողականներին կտրուկ դեմ գնալով ամեն նորի և նախընտրելով բնական գոյավիճակը: Նա հավատում է նախախնամությանը: Մուրացանին հարազատ է Շոպենհաուերի աշխարհի ունայնության գաղափարը, սակայն նա չունի Շոպենհաուերի ծայրահեղ մոտեցումը: Սարինյանը հանգամանորեն անդրադառնում է այս հարցին: Նա Մուրացանի պեսիմիզմը հակադրում է շոպենհաուերյան պեսիմիզմին այն համեմատելով տուրգենևյան պեսիմիզմի հետ:

Սակայն միայն պեսիմիզմի մեջ տեղավորել այս գրողին, սխալ է: Եթե Շոպենհաուերը ժխտում է երջանկությունը՝ այն համարելով մեծագույն տառապանք, կյանքը համարում անիմաստ գերադասելով մահը, Մուրացանը հավատում է երջանկությանը. երջանկությունը սիրո մեջ է, և այն իմաստավորում է կյանքը: Սակայն երջանկությունը, սերը մարդու կյանքի միակ իմաստը համարելով հանդերձ Մուրացանը դրանից բարձր է դնում պարտքի գաղափարը: «Մասնավոր անձի երջանկության ձգտումը նրա էտիկայում մշտական հակասության մեջ գտնվեց «հասարակաց պարտքի» անձնագրի նվիրումին և նա չկարողացավ լուծել հանգույցը ներդաշնակ միասնությամբ»,- գրում է Սարինյանը: Եվ Մուրացանը միշտ հանգույցի ճշմարիտ լուծումը տեսավ

առաջնահերթությունը պարտքին տալու մեջ: Ըստ նրա՝ պարտքի գիտակցումը մարդու մեջ պետք է ամեն անձնական երջանկությունից վեր լինի: Այստեղ ակնհայտ է նաև Կանտի փիլիսոփայության ազդեցությունը:

Վարդան Գալոբյանը շարունակում և լրացնում է Սարինյանին: Նա, համառոտ ներկայացնելով Սարինյանի տեսակետը և մեկ անգամ ևս նշելով Շոպենհաուերի և Կանտի ուսմունքների ազդեցությունը Մուրացանի վրա, կենտրոնանում է Մուրացանի հոգեբանական հանգույցների և լուծումների վրա զուգահեռներ տանելով Դոստոևսկու հետ: Նա նկատում է, որ Մուրացանի հերոսները ստիպված են ելք որոնել ամենաանելանելի վիճակներում, իսկ դա պայմանավորված է հայի ճակատագրով. «Եվ հայը մշտապես ձգտել է հնար գտնել այն ժամանակ, երբ հնար այլևս չկար, ուրեմն միակ ելքը պիտի ստեղծեր ինքը, և այն էլ մենակ»: Այդ ելքը անձնագրության, հանուն հայրենիքի սեփական երջանկությունը մոռանալու մեջ է գտնվել: Եվ անձնական երջանկություն և հայրենիք երկընտրանքի առջև են կանգնում նրա բոլոր հերոսները: Եվ հոգեբանորեն համոզիչ են նրա հերոսները իրենց ընտրությունը կատարելիս, արհեստական պաթետիզմից գերծ է մնում գրողը հոգեբանական ճիշտ զարգացումների շնորհիվ: «Գրողը խուսափում է պատմության կողմից «մատուցված» հայրենասիրության պատրաստի կաղապարների ընդօրինակումից և հայրենասիրությունն ընդհանրության ոլորտից դուրս է բերում դեպի կոնկրետ արտահայտություններ...: Դեռ այս հորիզոնականի վրա էլ բազմապատկվում է «Գևորգ Մարգարտունու ոչ միայն պատմական, այլ արդիական արժեքը»,- գրում է Վ. Գալոբյանը:

Եթե այսօր Մուրացանին անդրադառնում և կարևորում ենք, դա գալիս է նրա ստեղծագործությունների նպատակամղվածության հրատապությունից: Նրա «Նոյի ագռավում», «Առաքյալում» բարձրացրած հարցերը ցավոտ խնդիր են նաև այսօր: Նրա «Գևորգ Մարգարտունին» պետականության գաղափարի շուրջ համախմբվելու, այդ գաղափարը յուրաքանչյուր հայի փոխանցելու, նրա հոգին մտցնելու իր նպատակով աննաարդիական պահանջ է այսօր: Երկրի և ժողովրդի շահը անձնականից վեր դնելու, ազգային նկարագիրը պահպանելու դասերն այսօր օդ ու քրի պես անհրաժեշտ են այն սերնդին, որին բախտ է վիճակվել, զուցե վերջին անգամ, ազատության և անկախության ամուր հիմքերի վրա կառուցել սեփական ժողովրդի պետականությունը, ինչը եղել է անց փի մեր մեծերի և այդ թվում

Մուրացանի երազանքը, և ինչի իրականացմանն է ծառայել նա իր ամբողջ ստեղծագործական ներուժով:

Մերի Հայրապետյան
«Մեսրոպ Մաշտոց» համալսարան

Գեղարվեստը՝ ցավի բովանդակիչ

Յուրաքանչյուր դարաշրջանի գրական-պատմական պրոցես առանձնանում է յուրահատուկ ձևարվանդակային բնութագրականներով: Այսինքն՝ այն նախորդ և հաջորդ գրական ընթացքից տարբերվում է թեմատիկ-գաղափարական, ձևակառուցվածքային, ժանրային, լեզվաարտահայտչական և այլ հատկանիշներով: Գրական պրոցեսի նման զարգացումը օրինաչափ և անհրաժեշտ երևույթ է, այն որքան անսովոր, նույնքան էլ բնական է, քանի որ բոլոր դեպքերում գրականությունը իրականության գեղարվեստական վերարտադրությունն է, արտապատկերումը, իսկ վերջինս ժամանակի հետ փոխվում է, փոխվում են նաև նրա ընկալման և յուրացման ձևերը՝ պայմանավորված վերարտադրողի աշխարհընկալմամբ, իմացական ու մտածողական մակարդակով: Ասվածը մի կողմից, մյուս կողմից՝ յուրաքանչյուր գեղարվեստական դրսևորում կենթվում է իր ժողովրդի պատմությանը ու ճակատագրով: Այս հանգամանքով պայմանավորված, մեր խնդրո առարկան՝ ընդհանրացված ձևով վերցրած գրականության պատմությունը, բովանդակում է ազգային մտածողության արծարծումները՝ գեղարվեստական խնդրի իրագործման ճանապարհին որպես նյութ ծառայեցնելով այն ամենը, ինչը բացատրվում է ժողովրդի հոգեբանություն, ազգային ոգի, էություն հասկացություններով: Գաղափարական այս տեսակետը հիմնավորվում, ապացուցվում է այն գլխավոր արյունատար երակի առկայությամբ, որը գոյավորվում է ազգային ակունքներից, որով սնուցվում է ժողովրդի ոգին և որն էլ բոլոր ժամանակների գաղափարակիրն է: Այսպես, յուրաքանչյուր գրականություն նախ էլակետվում է ժողովրդական, ազգային աղբյուրներից:

Այս ամենի հավաստացիումն ամրապնդվում է թեկուզ այն փաստով, որ վերքուցավոտ է հայ գրականության պատմությունը, որքով ու վերքով է հուսնցված հայ գեղարվեստական միտքը: Ռոմպիետն այդպիսինն է ժողովրդի ճակատագիրը, այդպիսինն է ժողովրդի պատմությունը: Խնդրո առարկայի քննության համար վերցնենք Հովհ. Մելքոնյանի «Հիշողության դաշտ» գիրքը:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

